

ՀԱՅՈՑ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

(Տեսութիւն հայ սովորութեան իրաւունքից)

Խ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

Այն բոլոր կարգերը, որոնք սահմանում են, թէ ինչպէս որեւէ անձնաւորութեան մահից յետոյ նրա գոյքը անցնում է կենդանի մնացածներին, կազմում են ժառանգական իրաւունքը:

Ժառանգական իրաւունքի մէջ պարփակուած է այն դադարփարը, թէ սեփականութեան իրաւունքի, նմանապէս և սեփականական իրաւական դաշինքների էութիւնը—նրանց անմահութիւնն է: Սեփականատէրը կարող է մեռնել, ոչնչանալ, բայց սեփականութիւնը մնում է, դեռ ապրում է նրանից յետոյ: Պարտատէրը կարող է հեռանալ այս աշխարհից, բայց նրա պարտքերը դեռ պահպանում են իրենց գոյութիւնը, դեռ մնում են այս աշխարհում: Սեփականութիւնը, պարտքերն, անձնաւորութեան մահով չեն ոչնչանում: Ինչպէս Որովհետեւ մեռնող անհատի ընտանիքը նրա մահով չի ոչնչանում, այլ մնում է կանգուն, պահպանում է իր կեանքն ու գոյութիւնը: Այս միտքը պարզելու համար անհրաժեշտ է ըմբռնել նախնական հին ընտանիքի նշանակութիւնն այս հարցի վերաբերմամբ:

Նախնական ժամանակներում ընտանիքը, այսպէս անուանուած նահապետական գերդաստանն, իր ամբողջութեամբ ներկայանում էր իբրեւ մի առանձին սեփականատէր: Գերդաստանը մի համայնք էր տնտեսական հիմունքներով առաջացած, մի տնային ինքնուրոյն տնտեսութիւն էր: Հին յունական օյկոսը կամ լատինական familia-ն հասկացւում էր մի գաղափարով՝ իբրեւ մի տուն, որ տնտեսական կազմակերպութեան միաւոր էր նշանակում: Այդ նոյն հիմնական գաղափարով էր ըմբռնուում հայ նահապետական

գերդաստանը, որ գարեբով պահպանուել էր հին ժամանակներէց սկսած մինչև մեր օրերը: Ժամանակի ընթացքում ի հարկէ այդ գերդաստանները մանրացել են, սակայն ընտանեկան համայնքի տնտեսական նշանակութիւնը, գաղափարը կարողացել է բաւականի անաղարտ պահպանուիլ նրա կօնստրուկցիայում: Այլապէս չէր էլ կարող լինել, որովհետեւ, եթէ վերանում է ու ոչնչանում այդ համայնական տնտեսական հիմքը, այն ժամանակ գերդաստանն ինքնըստինքեան կորցնում է իր գոյութիւնը, դիֆերենցիացիօնի է ենթարկւում, առաջ բերելով մի շարք անհատական ընտանիքներ, որոնք արդէն համապատասխանում են տիրապետող արտադրողական յարաբերութիւններին և ներկայացնում են ժամանակակից սօցիալ—տնտեսական էվօլյուցիօնի աստիճաններէց մէկը:

Հայ նահապետական գերդաստանի գլուխն է տան նահապետը, pater familias՝ ընտանիքի հայրը, մեծը, օժտւած անսահման ծայրայեղ իրաւունքներով, որոնք երբեմն դեսպօտութեան են հասնում: Այդ իրաւունքը, հօր այդ իշխանութիւնը՝ նման հռովմէական patria potestas-ին՝ տարածւում է տան բոլոր անդամներին՝ որդիների, թոռների ու սրանց կանանց: Տակաւին ժողովրդի մէջ պահպանել է այդ իրաւունքի նախնական դեսպօտական բնատրութեան հետքերը, որոնք արտայայտւում են այնպիսի խօսքերով, ինչպէս Ջաւախքում. «հայրը անսահման իշխանութիւն ունի որդիներին ծախելու և գինն ուտելու»: Նոյն այդ գաղափարն է պարփակւած հին հռովմէական patria potestas-ի մէջ ius vitae ac necis, այսինքն կեանքի ու մահուան իրաւունք ասած բառերով: Տան նահապետն է որոշում իւրաքանչիւրի աշխատանքը, իր կամքով ամուսնացնում է որդիներին ու թոռներին, տնօրինում է նրանց բաղլը, պատժում է նրանց, որոնք դէմ են գնում իր իշխանութեանն և այլն:

Տանտէրը համարւում է ընտանիքի միակ ներկայացուցիչը բոլոր հասարակական, իրաւաբանական յարաբերութիւնների մէջ: Ընտանիքի հասկացողութիւնը և տանտիրոջ կամ նահապետի գաղափարները նոյնանիշ հասարակական նշանակութիւն են ներկայացնում: Այս տեսակ գաղափարի ելակէտն այն է, որ ընտանիքը համարւում է մի ամբողջ տնտեսական համայնական միավոր, բաղկացուցիչ անդամները համաւասար ու անբաժան տէրեր են ներկայանում ընտանեկան գոյքի և ընչքի: Ընտանիքն իր ամբողջութեամբ մի հաւաքական, համայնական սեփականատէր է համարւում, որն իր ընդհանուր միջոցներով թէ շահագործում է համայնական գոյքը և թէ արտադրած արգասիքն էլ անբաժան

կերպով սպառում է: Միմիայն տանուտէրն է հանդէս գալիս իբրեւ ներկայացուցիչ այն համայնական տնտեսական միաւորի. ներկայացուցիչ, որ պատասխանատու է ընտանիքի բոլոր անդամներին կողմից ամբողջ տնտեսական հասարակակոն յարաբերութիւններին մէջ: Նա է ընտանիքի կողմից դաշինքներ կապում, պարտք անում և պարտք տալիս, հարկեր վճարում, նոր գոյքեր ձեռք բերում, ծախսում, գնում և այլն և այլն: Նա, լինելով տանուտէր, ընտանիքի մեծ, իր առաջին հոգան ու պարտականութիւնն է համարում ոչ միայն անխախտ ու անսպառ պահպանել համայնական գոյքն և սեփականութիւնը, այլ և ձգտել բազմացնելու, աւելացնելու այդ գոյքը:

Նմանապէս ընտանիքի իւրաքանչիւր անդամը քաջ գիտակցում է համայնական կազմի գաղափարը: Արեւնակցական կապերի շնորհիւ այդ գաղափարը հէնց մոտոծելու առաջին օրից հիմք է դնում և ամրանում նրա աշխարհայեացքի, նրա իրաւաբանական հասկացողութեան մէջ: Ընտանեկան գոյքի, սեփականութեան մէջ հաշուում են հաւասար կերպով թէ շարժական և թէ անշարժ գոյքերը: Հայ սովորութեան իրաւունքի համաձայն ընտանիքի իւրաքանչիւր անդամը պարտաւոր է իր ամբողջ աշխատանքը թափել այդ գոյքերի յաւելման համար: Օտարութեան մէջ վատտակած դրամն և գոյքը, եթէ դա նոյն իսկ առանց ընտանեկան սեփական կապիտալի է ձեռք բերւել՝ բոլորը համարւում է ընտանեկան սեփականութիւն և մտնում է ընտանիքի, աւելի լաւ ասած, նրա ներկայացուցչի, նրա լիազօրի, այն է՝ տանտիրոջ, տան նահապետի կատարեալ տնօրինութեան ներքոյ: Բացառութիւն են կազմում համայնական ընչքից այն առարկաները, որոնք ծառայում են ընտանիքի մի քանի անդամների անձնական անմիջական գործածութեան համար: Այդ առարկաների հաշին պատկանում են զաւակներին հագուստները, զէնքը, նմանապէս հարսների ու կանանց հագուստեղէնն ու զարդերն և վերջապէս այն դրամները, որոնք գոյացել են բերած օթիտից ու հարսանեկան ընծաներից՝ արնազինը: Ընտանիքի անդամների պարտքերի և այլ վճարելիքների համար պատասխանատու է տան նահապետը ընտանիքին համայնական ամբողջ գոյքով: Թէ պարտապանները և թէ զանգատաւորները դիմելու են ընտանիքի լիազօրին՝ տանտիրոջը, և վերջինս իրաւունք չունի հրաժարւելու վճարելիքներից, պատճառաբանելով, թէ պարտքերը ու ֆինանսները արել է որդին կամ ընտանիքի այլ անդամը առանց իր գիտութեան:

Սակայն սովորութեան իրաւունքը, նայելով ընտանիքի վրայ նաև կրօնական բարոյական տեսակէտից, ընտանիքի, որ

կազմում է իր նախահօր շառաւիղի, իր ցեղական նահապետի շարունակութիւնը, նմանապէս ընականորէն հետեւեալ հասկացողութիւնն էր առաջ բերելու ինչպէս որ յարատեւ պիտի լինի ընտանեկան կուլտը, պաշտամունքը նրա, այսինքն ընտանիքի, գոյութեան անհրաժեշտութեան համար, այնպէս էլ ընտանեկան գոյքը, սեփականութիւնը անբաժանելի, անխախտ պիտի անցնէ սերունդէ սերունդ միեւնոյն ընտանիքի շարունակութեամբ: Հասկանալի է, որ այսպիսի դէպքում ժառանգութեան գաղափարը մի խորթ բան է տիրապետող ընտանեկան սովորութեական իրաւական հայեացքներում: Քանի որ ընտանիքը շարունակում է իր գոյութիւնը նոյնութեամբ նոյն իսկ դարերի ընթացքում, ընականաբար նրա գոյքն ու սեփականութիւնն էլ, որոնք նրա գոյութեան հիմքն են կազմում, նոյնպէս զուգահեռաբար շարունակում է իր գոյութիւնը պահպանել: Փոխում են ընտանիքի անգամները տարիների ընթացքում. մեռնում է տան նահապետը, սրան յաջորդում է աւագ որդին կամ հետեւեալ կրտսերը և այսպէս շարունակ, անընդհատ. բայց քանի որ միեւնոյն ժամանակ ընտանիքն, համայնքը մնում էր կանգուն, անբաժան, համայնական ընտանեկան սեփականութիւնն և գոյքն էլ կանգուն, անբաժան, համայնական ընտանեկան սեփականութիւնն և գոյքն էլ մնում է կանգուն, անբաժան: Ուրեմն համայնական ընտանեկան սեփականութեան գաղափարին միանգամայն խորթ է ժառանգութեան հարցը:

Ժամանակի ընթացքում սօցիալ-տնտեսական էվոլյուցիոնի շնորհիւ համայնական ընչական գաղափարը տարրալուծւում է, եւ ահա նահապետական գերդաստանը դիֆերենցիացիոնի է ենթարկւում: Սկսում է գերիշխել ինդիվիդուալիզմի, անհատականութեան սկզբունքը: Քանի որ տիրապետում էր բնական ցեղայնութիւնը և հասարակական արտադրական յարաբերութիւնները դուրս չէին գալիս գերդաստանի, տան օջախի սահմաններից, միանգամայն տրամաբանական հետեւեալ անհրաժեշտ էր թւում և ընտանեկան համայնքի գոյութիւնը: Սակայն առաջ է գալիս աշխատանքի բաժանումը, ուր միանգամայն փոխում է արտադրական յարաբերութիւնների ձեւերը և հասարակական-տնտեսական կեանքում մտցնում է անհատական սեփականութեան գաղափար: Վերջինս յեղափոխականացնում է ամբողջ գերդաստանական կազմը և ի վերջոյ տարրալուծում է ընտանեկան համայնքի հիմքերը: Այդ անհատականութեան գաղափարը շատ ընդոռչ ու շեշտակի աչքի է զարնում նահապետական գերդաստանների բաժանումների մօժենտներին:

Երբ հարց էք տալիս հայ գիւղացիներին, թէ ինչու են բաժանուում նրանց ընտանիքները, նրանք ձեզ մեծ մասամբ պատասխանում են, թէ հարսերը «անբարիշտ» են, թէ «երար միս են ուտում», իրար հետ կուում են և այլն. մի խօսքով՝ բաժանման գլխաւոր պատճառը նրանք համարում են հարսերին: Անշուշտ գիւղացիներն այս դէպքում իրենք իրենց անկարող են հաշիւ տալ այդ բաժանումների իսկական, էական պատճառների վերաբերմամբ: Ակնհերե է. որ գերդաստանների բաժանումների պատճառը հարսերը չեն, նրանց կուսախրութիւնը չէ, այլ այն անհատական գաղափարն ու աշխարհայեացքը, որ կամաց կամաց տրամաբանական անհրաժեշտութեամբ ճանապարհ է հարթել իր համար նրանց մտածողութեան, նրանց հասկացողութեան մէջ. թէ ինքն է տէրը, թէ ինքն է միայն օգտւելու իր մարդու աշխատանքով, բերած վաստակով: Այդ անհատական սեփականութեան գաղափարն է, որ դրսւում է իւրաքանչիւր հարսին միշտ կուել, նախանձով վերաբերւել դէպի տնակից միւս հարսերը, որոնք նոյնպէս քանի որ միևնոյն ընտանեկան համայնքում են, հուսաւոր կերպով օգտւում են իւրաքանչիւրն իր մարդու աշխատանքից, բերած վաստակից:

Ուրեմն երբ գերգաստանի մէջ հանդէս է դալիս անհատական սեփականութեան գաղափարը, բնական է, որ այդ գերգաստանի գոյութեան օրերը հաշւած պէտք է համարել: Եւ ահա տան մեծի մահաւմբ, իսկոյն տան միւս անդամները՝ որդիները, հօրեղբայրները սկսում են բաժանւել: Գերգաստանի սեփականութիւնը համարւում էր համայնական—ընտանեկան, որը կանգուն էր և իւր գոյութիւնը շարունակում էր անխախտ պահպանել, թէև մի շարք սերունդներ էին մեռնում և սրանց տեղը նոր ծնունդներ էին փոխարինում: Սակայն այժմ, անհատականութեան սկզբունքի համաձայն, գոյքն էլ պիտի անհատականար, սեփականութեան վրայ էլ պիտի տարածւէր անհատական աշխարհայեացքը: Ինչպէս որ գերգաստանն էր բաժանւում իր բաղկացուցիչ մասերի, ըստ այնմ էլ նրա գոյքն էր բաժանւում, նրա սեփականութեան իրաւունքներն էին բաժանւում:

Ինչպէս բաժանել գոյքը, հիմ և որքան տալ—ահա այն հարցերը, որոնք ծագելու էին իւրաքանչիւր բաժանման դէպքում:

Այս հարցերին արդէն պատասխանում է ժառանգական իրաւունքը, որը, ինչպէս վերը նկատեցինք, ծնունդ է առել ու կազմակերպւել միմիայն անհատական սեփականութեան գաղափարի ծագումով: Այդ հիման վրայ մեզ շատ հասկանալի կը լինի, թէ ինչու ժառանգական իրաւունքը հայկական հասարակական կեանքի զարգացման պատմութեան մէջ խիստ անբաւարար ու

անմշակ ընտրութիւն է կրում: Հայ շահապետական գերդաստանը մինչև անցեալ դարի վերջերը տեղ տեղ պահպանել էր իր գոյութիւնը. ուրեմն և ընտանեկան բաժանումները, պատմականօրէն նայած, համեմատաբար նորագոյն երևոյթներ են: Հետևապէս ժառանգական իրաւունքը հայերիս մէջ մնացել է ու հասել է մեզ իր զարգացման սկզբնական աստիճաններում: Սովորութիւնը, իւրաքանչիւր ազաթը, որ իրաւունքի աղբիւրն է համարոււմ, կարգաւորելով բաժանման դործողութիւնները և որոշելով իւրաքանչիւր ժառանգի հերթն ու ստանալիք մասը, գտնուում էր իր խմորման, իր գոյացման սրօցեսսում: Ուստի և ժառանգական իրաւունքն ըմբռնելու համար անհրաժեշտ է մեր հայկական սովորութիւնների էութիւնը վերլուծել:

II

Ժառանգական իրաւունքը, ոտք դնելով ժողովրդական սովորութիւնների մէջ, այնուամենայնիւ չի կարողանում խախտել այն գաղափարը, որ թագնւած էր ընտանեկան համայնական ընչքի գերդաստանի սեփականութեան անձեռմխելիութեան մէջ: Դա՝ ժառանգելու ազնատական սխտեմի սկզբունքն է. սկզբունք, որ տակաւին անաղարտ պահպանւել է մինչև օրս շատ հայաբնակ տեղերում: Ազնատական սկզբունքի հիման վրայ իգական սեռի դիմը դուրս էր գցւած ժառանգելու իրաւունքից: Քանի որ սովորութեան իրաւունքը միայն արնական գծով էր ընդունում ազգականութեան նշանակութիւնը, միայն արնական գծի մէջ էր տեսնում ընտանիքի, գերդաստանի յարատեւութիւնը. քանի որ ժողովրդի հասկացողութեամբ՝ միայն այդ մարդը կարող էր նահապետի, գերդաստանի նախահօր կուլտն ու սերունդն շարունակելով, պահպանել ընտանիքի գոյութիւնն,—պարզ էր, որ ժառանգութիւնն էլ պիտի միայն արնական գծով ճանաչէր ժառանգների իրաւունքները: Կանայք իբրև օտար սերունդներէց, օտար ընտանիքներից եկած, նմանապէս և չամուսնացած աղջիկները, որոնք ապագայում, ամուսնանալով, պիտի հեռանային իրենց հայրական կուլտից և մտնելու էին մի օտար գերդաստան, յարելու էին օտար նահապետական կուլտին, ծառայելու էին միանգամայն օտար գերդաստանի սեփականութեան ու ընչքի բարօրութեան, անշուշտ և բնականօրէն պիտի զրկէին ժառանգական իրաւունքներից: Կանանց զրկւած ժառանգական իրաւունքը մի ունիվերսալ, ընդհան-

րական երևոյթ է գրեթէ բոլոր ազգութիւնների ու ժողովրդների կուլտուրական պատմութիւնների մէջ: Դա միանգամայն հասկանալի է, երբ մենք նկատի առնենք, որ գրեթէ բոլոր ժողովրդները մասամբ արդէն անցել են այդ շրջանը, մասամբ էլ տակաւին մնում են նահապետական գերդաստանական կազմակերպութեան շրջաններում:

Մեր պատմութեան մէջ մի թանգագին վկայութիւն ունինք, որ ապացուցանում է, թէ հին Հայաստանում տեղական սովորութիւնների համեմատ ժառանգական իրաւունքների մէջ գերիշխում էր ազնատական այդ սկզբունքը: Բիւզանդական Յուստինիան կայսեր XXI Novella-յում յիշում է, որ Հայաստանում կանայք զուրկ էին այդ մարդկանց հետ հաւասարապէս ժառանգելու իրաւունքներից. «Et non secundam barbaricam gentem virorum, quidem esse successiones tam parentum, quam fratrum et alterius generis milierum vero nequoquam»... Այդ հիման վրայ Յուստինիանը արգելում է այսուհետեւ հետեւել տեղական հայկական օրէնքներին և պահանջում է ենթարկւել միմիայն հռովմէական օրէնքներին, որոնք ընդունում են կանանց ժառանգական իրաւունքը. «... ut et apud armenios haec ipsa tenere quam etiam apud nos occasione successione feminarum et nullam esse differentiam masculi aut femini»...*) Սակայն այդ օտար հռովմէական իրաւունքը այնուամենայնիւ անկարող եղաւ խախտելու ազնատական սկզբունքը հայ ժառանգական իրաւունքից. մի սկզբունք, որ, պահպանւելով մինչև օրս ժողովրդի սովորութեան իրաւունքի մէջ, տակաւին իր ազդեցիկ դերն է խաղացել և խաղում է հայ իրաւունքի պատմութեան մէջ:

Ներկայ հայ սովորութեան իրաւունքի մէջ ժառանգական հարցերի վերաբերմամբ քաջարձակապէս արտահայտւում է այդ ազնատական սկզբունքը: Միջին դարի ժառանգները արականների հետ օրէնքը թէև հաւասար իրաւունքի տէր կը ճանաչէ, բայց սովորութիւնը անաջիւնները զրկած է իրենց իրաւունքներից. մեծ ամօթ ու անազնութիւն կը համարւի, եթէ հօր անցմանից յետոյ բոլոր մի իր եղբայրներէն ժառանգութեան մասն խնդրէ, եթէ՝ մինչև անգամ ամենաթշուառ դրութեան մէջ էլ լինի ամուսնացածը: 1)

*) XXI Novella (536 an.)—De Armeniis ut ipsi per omnia sequantur Romanorum leges.

1) Բէնսէ՝ Բուլանըխ—«Ազգագրական Հանդէս», գիրք. Ե-6681 Թ.

Ակներև է, որ այսպիսի պայմաններում հայ օրէնսդրական ժողովածուները կրելու էին իրենց վրայ սովորութեան իրաւունքի ազդեցութիւնը. սովորութիւն, որը հայկական իրականութեան մէջ կատարում էր ազդիտիւ իրաւունքի գերը: Այդ ազնատական սկզբունքով է ամբողջապէս տողորած Մխիթար Գօշի Դատաստանագիրքը, որը այս հարցում զուրկ չի եղել նաև Մովսիսական օրէնքների մասնակի ազդեցութիւնից, ինչպէս կրտեսները յետագայում: Մխիթար Գօշին յայտնի է ժառանգումն միմիայն ըստ ազնատական սկզբունքի և այն էլ երբեմն լոկ առնական գծով: «Այլ զի սերմն ոչ է հօրն՝ ոչ ժառանգէ», ¹⁾ կամ «Այլ զկնի մահու, թէ ինքն ոչ հաստատեաց, ազգականքն ՚ի տոհմէ և ոչ հեռաւորքն ժառանգեն»: ²⁾ Մի այլ տեղ Դատաստանագիրքը ասում է. «Հեռաւոր ընտանւոյ ոչ հրամայէ, և զցիդ հօրն առնէ ժառանգ և ոչ մօրն»: ³⁾ Նոյն իսկ մեծնոգի պատկաւ զստեր որդին սկզբունքով զրկւած էր ժառանգութիւնից, զի իւր սերմն զուստն է և ոչ որդի զստերն»: ⁴⁾:

Նաև այնպիսի Դատաստանագիրք, ինչպիսին է Ասորա-Հռովմեականը, որը յայտնի էր հայ ձեռագիրների մէջ Նոմոկանոն անունով և բաւականին գործառնութիւն ունէր ըստ երևոյթին հայկական Դատաստանական հիմնարկութիւններում, կրում է իր մէջ նոյնպէս այդ ազնատական սկզբունքի հետքերը:

Մինչդեռ յիշեալ Դատաստանագրքի մէջ զետեղւած այն յօդւածները, որոնք վերաբերում են ըստ կտակի ժառանգութեան կանոններին, խմբագրւած են միանգամայն հռովմէական օրէնքների հետևողութեամբ, այն է՝ կօգնատական սկզբունքի գերակշռութեամբ. ընդհակառակն նոյն Դատաստանագրքի այն յօդւածները, որոնք վերաբերում են անկտակ ժառանգութեան հարցին, շարադրւած են, միանգամայն պահպանելով ազնատական սկզբունքն, և մեծ նմանութիւն ունեն Մովսիսական օրէնքներին: Այս երևույթի բացառութիւնը խոստ պարզ է: Ասորա-Հռովմէական Դատաստանագրքի մէջ անդրադարձել է երկու սկզբունքների փոխադարձ պայքարը. մի կողմից՝ կօգնատական, որ յատուկ էր հռովմէական իրաւունքի նօրմերին, իսկ միւս կողմից՝ ազնատա-

¹⁾ Մխիթար Գօշ. Դատաստանագիրք Հայոց. հրատար. Վահան վրդ. Բաստամեանի. 11 մասն («Աշխարհական օրէնք»), գյուլիս կթ.

²⁾ Մխ. Գօշ. Դատաստանագիրք հայոց, մ. II, գլ. 76.

³⁾ Ibid. մ. II, կթ.

⁴⁾ Ibid.

կան սկզբունքը, որ տիրապետում էր ժողովրդի սովորութական իրաւունքի նորմերում: Այդ Խառատանագրքի այսպիսի հեղինակները ժառանգական իրաւունքի յօդաձեւերը կադմելիս, կտակով ժառանգութեան վերաբերեալ ըլլոր իրաւունքները խմբագրել են, իւրացնելով հոգովէական օրէնսդրութեան սկզբունքները, որոնք անհրաժեշտ էր նրանց կարծիքով և կարելի էր ներմուծել տեղական իրաւաբանական հայեացքների մէջ, իսկ անկտակ ժառանգութեան վերաբերեալ օրէնքները ստիպւած էին մասամբ համաձայնեցնել գոյութիւն ունեցող իրաւական նորմերին, իրրե իրական պօզիտիւ կանոններին, որոնց վերացումն ժողովրդական դարեոր հաստատւած սովորութիւններից միանգամայն անհնարին էր:

Ահա այս ազնատական սկզբունքով է ընորոշւում հայոց ժառանգական իրաւունքը. մի սկզբունք, որ կարմիր թելով անցնում է հայոց թէ՛ գրաւոր օրէնքների և թէ՛ սովորոյթների միջով:

III

Այժմ դիտենք, թէ ի՞նչ յաջորդութեամբ է կատարւում ժառանգական իրաւունքը ընտանիք կազմող ազգականների մէջ, երբ մեռնում է տանտէրը, ընտանիքի հայրը և ժառանգութիւնը թողնում է առանց որևէ կտակի: Ինչպէս վերը մի անգամ յիշել ենք, ժառանգական իրաւունքը հետեանք է գերդաստանի, համայնական ընտանիքի դիֆերենցիացիօնի. ժառանգական իրաւունքը ասպարէզ է գալիս ժողովրդի հասարակական յարաբերութիւնների մէջ, երբ համայնական ընտանիքի անդամները նահապետի մահամբ ըաժանում են իրար մէջ գերդաստանի ամբողջ գոյքը: Բայց քանի որ ընտանեկան այդ տեսակ համայնական կազմակերպութիւնները գոյութիւն են ունեցել մինչև վերջին ժամանակները և մենք ներկայումս տկանատես ենք այդ կազմի իսպառ տարրալուծման պրօցեսսի վերջին աստիճաններին, ուստի և ժառանգական իրաւունքի նորմերը սովորութական իրաւունքի մէջ գտնւում են այժմ իրենց զարգացման սկզբնական աստիճաններում և այնուհետև կանգ առել, սառել են առանց յառաջդիմելու: Այստեղ մեծ դեր են խաղացել կիրառւող պետական օրէնքները, որոնք հալածելով, սովորութական իրաւունքը, սկսել են միանգամայն իրենց նորմերով ու իրաւաբանական ոգով դեկլարել ժողովրդի մէջ ծագող ժառանգական յաջորդութեան հարցերը: Զարմանալի չէ, որ ժառանգական սովորութական իրաւունքի այդ մասը հետազօտելիս, հանդիպում ենք մեծ դժւարութիւնների: Այդ ժառանգական իրա-

ւունքը, կանգնած լինելով իր դարգացման սկզբնական աստիճանների վրայ, չներկայացնելով իրենից մի հոմօրէն երևոյթ, յաջորդութեան հարցի վերաբերմամբ կրում է խիստ անորոշ, խառնակ ու խայտաբխետ բնաւորութիւն. այստեղ կըտեսնենք, որ ժողովրդի սովորութիւններն այդ հարցի վերաբերմամբ խիստ կերպով ազդել են կանոնական իրաւունքի նօրմերից, նմանապէս և շրջապատող հարևան սղղների ժառանգական յաջորդութեան սովորութիւններից:

Ահա թէ ինչու զանազան հայաբնակ վայրերում ժառանգական յաջորդութեան հարցերը շատ անգամ իրարից տարբերուած են ժողովրդի սովորութիւնների մէջ և չեն ներկայացնում մի ընդհանուր, իրաւական դոյն կրող բնաւորութիւն: Ամենայն դէպս, նկատելի է այդ սովորութիւնների մէջ մի ընդհանուր ղեկավարող սկզբունք, որն ըստ կարելոյն խստիւ պահպանուած է, ժառանգական յաջորդութեան վերաբերեալ հարցերը լուծելիս:

Դա աշխատանքի սկզբունքն է, որ կարմիր թելով անցնում է ընտանեկան գոյքի բաժանման դէպքերում և այդ բաժինների տէր լինելու իրաւունքի մէջ: Այստեղ ընտանիքի իրաւազօր անդամները հօր մահից յետոյ հանդէս են գալիս իբրև ժառանգներ, որոնք աշխատանքի ներկայացուցիչներ են և ընտանեկան գոյքի, հարստութեան աւելացման մասնակիցներ:

Բայց և այնպէս փորձենք զոնէ մօտաւորապէս պարզաբանել և զտել ժողովրդական սովորոյթների մէջ կիրաւուող ժառանգական յաջորդութեան կարգերը, որոնց հիման վրայ կարելի կըլինի մի որոշ գաղափար կազմել, թէ ինչպէս է նայում ժառանգական սովորութեական իրաւունքը ժառանգների յաջորդականութեան հարցի վրայ:

Ժառանգական իրաւունքի առաջի պայմանն է, որ ժառանգողները լինեն մեռնողի արիւնականից ազգականները: Սրանք ըստ յաջորդութեան բաժանուած են գլխաւորապէս 3 կարգի:

Ժառանգողների առաջին կարգին պատկանում են մեռնողի որդիքը, իսկ վերջինների բացակայութեան դէպքում թոռները. այսինքն ուղղակի գծով վայրենեթաց ազգականները:

Երկրորդ կարգը կազմում են մեռնողի հայրը, հարազատ եղբայրները և հարազատ եղբայրների որդիները:

Երրորդ կարգին պատկանում են մեռնողի հօրեղբայրը, հօրեղբոր որդիները և հօրեղբոր որդիների որդիները:

Այնուհետև այդ վերոյիշեալ երեք կարգերի բացակայութեան դէպքում հանդէս են գալիս միւս մօտիկ ազգականներն ըստ ազնատական գծի: Վերոյիշեալ յաջորդական կարգերից կարելի է

եզրակացնել, որ անգաւակ մեռնողի գոյքը անցնում է գլխաւորապէս վերնընթաց գծով ազգականներին, նախ ուղղակի և ապա կողմնակի:

Այդ կարգերի բաժանումն ձեռք փորձեցինք ուրագծել մօտաւորապէս, քանի որ սովորութեական իրաւունքի մէջ նկատում ենք բազմաթիւ մասնակի շեղումներ, որոնք առաջ են գալիս կենսական հասարակական պայմաններից: Ախալցխայի և մի քանի այլ տեղերում հօր մահանից յետոյ հաւասար իրաւունքով ժառանգներ են համարուում ոչ միայն որդիները, այլ և հօրեղբայրները և վերջինների որդիները, եթէ դրանք բոլորը միասին ապրելիս են եղել մի տանիքի տակ և կազմել են մի գերդաստան: Բոլոր այդ ժառանգները հաւասար մաս են ստանում ընդհանուր համայնական գոյքից: ¹⁾ Այս դէպքում ժառանգական յաջորդութեան կարգը փոփոխուում է շնորհիւ աշխատանքի սկզբունքի ներկայութեանը: Իսկ մի քանի տեղերում էլ, ինչպէս Բուլանըխում, հայրը որդոց ժառանգութեան մէջ բաժին չունի. բայց կենդանի մնացած միւս որդիները պարտաւոր են ցմահ պահել նրան ²⁾:

Այն հանգամանքը, որ ժառանգական իրաւունքը պատկանում է գլխաւորապէս արական սեռի ժառանգողներին, այնուամենայնիւ մեզ թոյլ չի տալիս եզրակացնելու, որ մեռնողի մահաւամբ բոլոր կանայք զրկւում են իրաւունքներից և միայն արու ժառանգները տիրանում են իրանց իրաւունքներին: Այսպիսի դէպքերում ժողովրդական սովորութեական իրաւունքը պահպանում է մի շարք նօրմեր, որոնք որոշ չափով ապահովում են մեռնողի ընտանիքին պատկանող կանանց տնտեսական դրութիւնը: Կանայք, զրկւած լինելով ժառանգական իրաւունքներից, օգտուում են միայն կենսական ապրուստի իրաւունքներով: Ժառանգները պարտաւոր են իրենց այրի մօրը մինչև մահ պահել և ապրուստի միջոցներ հայթհայթել: Նմանապէս են վարւում և իրենց քոյրերի հետ, որոնց պարտաւոր են պահել տանը ու կերակրել մինչև մարդու գնալը. իսկ եթէ քոյրերը արդէն ամուսնացած են, ոչինչ չեն տալիս, ասելով՝ «կտոր մի հաց գտէր է, զնացէր յետև»:

Սակայն պատահում են դէպքեր, երբ իդական սեռն էլ է օգտուում ժառանգական իրաւունքներից: Բուլանըխում կանայք ուղղում են իրենց հօր ժառանգութիւնը տիրանալ. ¹⁾ երբ հօր արու ժառանգ միանգամայն չի մնացել, ²⁾ երբ մերձաւոր ազգական էլ

¹⁾ Матеріалы для изученія эконом. быта государств. крестьянъ Закавказск. Края, т III, ч. 2, стр. 94.

²⁾ Բննէ՛ Բուլանըխ—«Ազգագր. Հանդէս», 1899, գիրք Ե.

չունենալով, ժառանգութիւնը պիտի անցնի գերդաստանի հետաւոր ճիւղի մի կամ երկու անդամներին: ¹⁾

Արդ հարց է ծագում, թէ ինչ իրաւական յարաբերութիւններ են ստեղծուում կնոջ մահուամբ: Ինչպէս յայտնի է, ամուսնացած կանայք ունեն անձնական սեփականութիւն, որ յայտնի է արևազին տնունով և բաղկացած է այն գումարներէր, որոնք կազմել են հարսանիքին ստացւած բոլոր դրամական նւերներէր և ընծաների վաճառութից: Այդ գումարն անձնականի է, որի վրայ ոչ մի իրաւունք չունի կնոջ ամուսինը, եթէ նոյն իսկ ստեղծուած է գերդաստանից, այսինքն իր հօր տանից կամ եղբայրներից: Կնոջ մահից յետոյ արնագինը մնում է մարդուն, որպէս մի առանձին սեփականութիւն, որի վրայ իրաւունք չունի տան ոչ մի անդամը: Իսկ մարդու մահից յետոյ էլ արնագինի վրայ ժառանգական իրաւունք են ձեռք բերում զաւակները և այն էլ այսպէս. այդ գոյքի երկու մասը պատկանում է աղայ ժառանգներին, իսկ մի մասը աղջիկ ժառանգներին: ²⁾ Բայց եթէ կինը վախճանուում է այն ժամանակ, երբ մարդը անբաժան է հօրական տանից, արնագինի վրայ ժառանգական իրաւունք ունի ոչ թէ ամուսինն, այլ միայն զաւակները, որոնցից աղայքը նմանապէս ստանում են երկու մաս, իսկ աղջիկները մի մաս ³⁾:

Դառնանք խորթ որդիներին ժառանգական իրաւունքին: Համամայր որդիները արնագինի վերաբերմամբ նոյն իրաւունքներով են օժտւած, ինչ որ վերը յիշեցինք. իսկ համահայր որդիներից իւրաքանչիւրն իրաւունք ունի միմիայն իր հարազատ մօր արնագինի վրայ, բացի ի հարկէ այն իրաւունքից, որ նրանք ունեն հաւասար բաժիններ ստանալու իրենց հայրական կարողութիւնից: ⁴⁾ Այն խորթ որդին, որն իր խորթ հօր տանը աշխատել է հաւասար չափերով իր խորթ եղբայրների, այն է՝ իր խորթ հօր հարազատ զաւակների հետ, և մասնակից է եղել ընտանեկան գոյքի յաւելմանը, սովորութիւն համաձայն նոյնպիսի ժառանգական իրաւունքներ է վայելում իր խորթ հօր թողած ժառանգութեան վերաբերմամբ, ինչպէս և մեռնողի հարազատ զաւակները՝ իր խորթ եղբայրները: Նմանապէս այդ խորթ որդին հանդէս է գա-

1) Անդ.

2) Велинскіи. Народно-юридическіе обычаи Закавказья армянъ, стр. 33.

3) Եր. Լալայեան Ջաւախք, եր. 179.

4) Անդ 180 երես և նոյնի—Բորչալի գաւառ, «Ազգագրական Հանդէս», գիրք X, 1903 թ. եր. 129.

լիս իբրև միակ ուղղակի ժառանգ իր խորթ հօր թողած գոյքի, եթէ ասպարիզի վրայ չկան հարազատ արու զաւակներ, իսկ եթէ կայ մի հարազատ դուստր, այն ժամանակ այդ խորթ զաւակը ստանում է թողած ժառանգութեան միայն մի կէս մասը:

Սակայն երբ խորթ որդին իր հօր տանը ապրել է շատ քիչ ժամանակ, նա արդէն չի համարուում ժառանգ, այլ ընդհանուր գոյքի բաժանման միջոցին կարող է ստանալ միմիայն իր աշխատած մասը:¹⁾

Ժառանգական իրաւունքը սովորաբար անցնում է ոչ—արիւնակից ազգականներին, օտար մի սերնդի, օրինակայութեան միջոցով: Երբ ընտանիքը անժառանգ է, այսինքն բացակայում են մերձաւոր ազգականներ, տնփեսան է հանդէս գալիս իր իրաւունքներով և ժառանգում է աներօջ անշարժ ու շարժական գոյքը:²⁾ Նմանապէս ոչ—արիւնակից ժառանգների շարքումն են դասուելու որդեգիրները: Որդեգրած որդին ժառանգութեան իրաւունք ունի որդեգրողի միայն շարժական կայքի վրայ:³⁾

Կայ և մի այլ հարց, թէ ինչ չափով հայոց սովորութեան իրաւունքն ընդունում է ցեղայացչական սկզբունքը—ius representationis: Այդ հարցը շատ անորոշ ու անզարգացած է հայկական իրաւունքի մէջ: Ընտանեկան ժառանգական գոյքի բաժանման միջոցին գլխաւորապէս ուշադրութեան էին առնում, թէ ընտանիքի այս կամ այն անդամն ինչ չափով մասնակից է եղել համայնական գոյքի յաւելմանը: Բայց որովհետև մեռնողի եղբոր որդիները, որոնց հայրը վախճանւել էր առաջ, քան այդ ժառանգութիւն թողնող հօրեղբայրը, շատ անգամ հաւասար կերպով իրենց մեռնող հօրեղբոր հետ միասին մասնակից են եղել գերդաստանի ընդհանուր գոյքի յաւելմանը, ուստի և միշտ ըստ սովորութեան իրաւունքի, սրանք էլ ժառանգութիւնից ստանում են հաւասար բաժիններ իրենց միւս կենդանի մնացած հօրեղբայրների ու սրանց զաւակների հետ, ինչպէս դա մենք առիթ ունեցանք տեսնելու Ախալցխայի օրինակում (տես 12 եր.): Այս վերջին սովորոյթն անշուշտ հակասում է ներկայացչական սկզբունքին, որի հիման վրայ միևնոյն ազգակցական գծի մի քանի ներկայացուցիչները իրաւունք ունեն ստանալու ժառանգութիւնից միայն այն մի մասը, որ ստանալու էր նրանց ծնողը, եթէ սա

¹⁾ Зелинский. Народно-юридические обычаи Закавказья, армяны, кр. 31.

²⁾ Եր. Լալայեան—Ջաւախք, եր. 180: Բենսէ—Բուլանըխ՝ «Աղգաբարական Հանդէս», 1899, գ. 6, եր. 155.

³⁾ Եր. Լալայեան—Ջաւախք, եր. 180. նաև Зелинский.

վախճանւած չլինէր ժառանգութիւն թողնող եղբորից առաջ: Սակայն վերջերս շնորհիւ կիւսարեղ քաղաքացիական օրէնքների, ներկայացուցչական սկզբունքը սկսում է տեղ բռնել ժողովրդի իրաւարանական հայեացքների մէջ: Այդ ներկայացուցչական օրէնքը *ius representationis*—նոյնպէս բացակայում էր հին հռոմէական օրէնքներում, միայն XII Տախտակների (XII Tabulae) յայտարարումից յետոյ, շնորհիւ պրէտորական իրաւունքի, այդ օրէնքը սկսեց ճանապարհ հարթել ժառանգական իրաւունքի մէջ:

IV

Ծանօթանալով ժողովրդական սովորոյթների մէջ տիրապետող ժառանգական իրաւունքի յաջորդական կարգերի հետ, այժմ վերլուծենք այն ժառանգական իրաւական նօրմերը, որոնք մուծւած են հայ դատաստանագրքերի մէջ՝ գլխաւորապէս Մխիթար Գօշի դատաստանագրքի և մասամբ Ասորա-Հռոմէական օրէնագրքի, որոնք հայկական իրաւական հիմնարկութիւններում մեծ դործածութիւն էին գտած: Համեմատելով հայ ժողովրդի սովորութեան ժառանգական իրաւունքը յիշեալ Դատաստանագրքերի գրաւոր օրէնքների հետ, կըտեսնենք, որ վերջինները խիստ ազդւած են եղել ժողովրդական տիրող սովորոյթներից և ստիպւած են եղել մասամբ իւրացնել այն ոգին, որը տիրապետում էր ռոմէական իրաւաբանական հայեացքներում անկտակ ժառանգութեան վերաբերմամբ:

Մխիթար Գօշի Դատաստանագրքի ըստը քաղաքացիական օրէնքները, որոնք վերաբերում են ժառանգական իրաւունքին, սահմանում են հետեւեալ յաջորդական կարգը:

Հօր ժահւամբ ժառանգում են նախ եւ առաջ որդիները. նրամանապէս դստեր, որոնք տանն են և տակաւին մարդու չեն զննացել: ¹⁾

Այստեղ առաջի հայեացքից ասկատական սկզբունքը դուստրների ժառանգութեամբ կարծես մի տեսակ խախտում է: Մխիթար Գօշը, թերեւ ինքն էլ խոստովանում է այդ, քանիցս կրկնելով իր յօդւածների մէջ, թէ Մովսիսական օրէնքների և այլ օտար կանոնների մէջ դուստրների իրաւունքները ժառանգութեան

¹⁾ Մխիթար Գօշ՝ Դատաստանագրքը հայոց՝ հրատ. Վահան վրդ. Բասարամեանի. մասն II, գլ. գլ. ԿԲ, ԿԳ, ԴԶ.

վերաբերմամբ սահմանափակված են, բայց թէ ինքն աւելի օրինաւոր ու շիտակ է համարում չզատել որդիների ու դուստրների ժառանգական իրաւունքները: ¹⁾

Այս դէպքում մենք տեսնում ենք բիւզանդական իրաւունքի ազդեցութիւնն հայկականի վրայ (տես Յուստինիանի XXI Novella-ն):

Բայց, ինչպէս կարելի է եզրակացնել մեր Դատաստանագրքի յօդաձեւերից, բիւզանդական այդ ազդեցութիւնն չէր հասել լիովին իր նպատակին: Երևի Մխիթար Գօշը, տեսնելով, որ հայերի մէջ խիստ արմատացած է եղել ազնատական սխտեմը, կամեցել է մի տեսակ հաշտեցնել իր Դատաստանագրքի յօդաձեւերը ժողովրդական սովորութիւնների հետ: Ուստի մի կողմից հաւատացնելով որդիների ու տանը մնացած դուստրների իրաւունքները ժառանգութեան վերաբերմամբ, միւս կողմից էլ առաջ է բերում սահմանափակումներ ամուսնացած դուստրների նկատմամբ, սրանց զրկելով հօր ժառանգութիւնն ձեռք բերելու լիակատար իրաւունքից. «իսկ արտաքս գնացեալն և առն եղեալն, այլ ոչ կարեն ժառանգ լինիլ», ²⁾ վասնզի վերջիններիս ժառանգական իրաւունքով հօրական գոյքը անցնելու է արդէն մի այլ ազգակցական գծին և այդպիսով ոտնձիգ կարող է լինել ազնատական սկզբունքը, «զի մի ժառանգութիւնս յօտարս ելցէ»: ³⁾ Այդ հիման վրայ ամուսնացած դուստրները համարւում էին եղբոր կէսը, այսինքն իւրաքանչիւր պսակւած աղջիկ իրաւունք ունէր հօրական ժառանգութիւնից ստանալ միմիայն բաժին, այն էլ երկու անգամ պակաս, քան կղբայրը. «Երկու դուստր առն եղեալքն միոյ որդւոյ առցէ բաժին»: ⁴⁾

Թէ ինչու ամուսնացած դուստրը երկու, երեք, չորս և այլն անգամ պակաս պէտք է ստանայ, Մխիթար Գօշը հիմնւում է Ս. Գրքի վրայ և ասում. «զի կին ըստ կիսոյն անուանի մարմնոյն»: ⁵⁾

Դուստրների ժառանգական իրաւունքի պաշտպանութեան բացառութիւնն Դատաստանագիրքը փորձում է տալ, 'ի հարկէ, քրիստոնէական ոգու համաձայն: Պսակւած աղջիկները, հեռանալով հօր տանից, արդէն վերցրած են լինում սովորաբար իրենց հարսանեաց բաժինը (օժիտ և այլն), ուստի զստոսա հաւասարա-

1) Մխ. Գօշ, ibid.

2) Մխ. Գօշի Դատաստանագիրք մ. II, գլ. ԿԲ.

3) Ibid.

4) Մխ. Գօշի Դատաստանագիրք մ. II, գլ. ԿԳ, ԿԴ, ԿԵ, ԴԶ.

5) Մխ. Գօշի Դատաստանագիրք մ. II, գլ. ԿԳ.

բաժինն զկնի մահու հօրն չէ արդարութիւն»։ Իսկ ըղորովին զըրկել աղջիկներին, նման Մովսիսական և այլ «հեթանոսական» օրէնքներ, և մանաւանդ չամուսնացածներին, ժառանգական իրաւունքից—գա նոյնպէս անարդարութիւն է համարոււմ, որովհետեւ դուստրներ չամար աւելի դժւար է ապրել, քան թէ որդիներին. «և աղպէս ամենեցուն հաւասարութիւն եղիցի և տկար ազգն խնամեսցի և մի նւազ լիցի.»¹⁾ «Հաստատի ըստ այսմ որդւոց և դստերոց հաւասար լինել ժառանգութիւնն հօր, ըստ որում և Աստուած զոյգ ետ զժառանգութիւն արքայութեան արանց և կանանց»²⁾

Երկրորդ կարգը ժառանգութեան մէջ, եթէ չկային ուղղակի գծով ժառանգներ՝ որդիներ, թոռներ, գալիս էր մեռնողի եղբօրն, եթէ միայն սա զաւակի տէր էր։ Հակառակ դէպքում այդ կարգը նա ստիպւած էր զիջանել մեռնողի ամուսնացած դստեր, եթէ վերջինս ունէր զաւակներ. «Իսկ թէ առն լեալ դուստրն կամիցի իւրօք ծննդոքն և արամբն գալ և հայրենիս ժառանգել, նոցա լիցի և մի եղբօրն»։ Սակայն զրկւելով ժառանգութիւնից, մեռնողի եղբայրն այնուամենայնիւ ստանում է որոշ մաս, այն է՝ ¹/₆-ը թողած ժառանգական ընչքից։³⁾ Այս յաջորդութեան երկրորդ կարգը միանգամայն պարզ տողորւած է ամբողջապէս ազնատական սկզբունքով։

Երրորդ կարգը պատկանում էր մեռնողի հօրեղբօր, իսկ երբ ողջ է հայրը, սա է ժառանգոււմ։⁴⁾

Վերջին կարգը, միւս կարգերից ներկայացուցիչներ ըացաւայութեան դէպքում, հասնում էր քնացած ազգականներին «ի ցիղէ հօրն»։ Այստեղ ժառանգական իրաւունքը տարածւում է «ընտանիքի մերձաւորներին»—արականների վրայ մինչև չորրորդ աստիճանը։⁵⁾

Այս բոլոր կարգերից յետոյ արդէն, երբ ըացարձակապէս չկայ այլ ևս որեւէ ժառանգ, ժառանգութեան հարցի որոշումը թողնւում էր դատաւորների հայեցողութեանը⁶⁾։

Չնայած, որ Մխ. Գօշի Դատաստանագրքում ընդունւած ժառանգական իրաւունքի յաջորդութեան այս չորս կարգերը որոշ

1) Ibid մաս II, գլ. 22.

2) Մխ. Գօշ. մաս II, գլ. 49.

3) Մխ. Գօշ. մաս II, գլ. 48.

4) Մխ. Գօշ, մաս II, գլ. 48.

5) Մխ. Գօշի Դատաստանագիրք, մ. II, գլ. 48, 49.

6) Ibid, գլ. 48.

չափով ձգտում են պահպանելու, ինչպէս տեսնում ենք, ժողովրդական սովորոյթների մէջ տիրող իրաւաբանական հայեացքները, այնուամենայնիւ ակնեւ է, որ Մխիթար Գօշի իրաւաբանական հայեացքների վրայ այդ հարցում զգալի ազդեցութիւն են թողել մովսիսական օրէնքները: Այդ փաստը հանապազ հէնց ինքը Մխիթար Գօշը ակամայից զանազան նախադասութիւնների մէջ խոստովանում է:

Ելից գրքի Ի (հ 1—11) հաւաածներում Մովսէս մարգարէն այսպէս է սահմանադրում երրայական ժառանգական իրաւունքը, որ նոյնպէս յաջորդում է 4 կարգով.

1 «Այր ոք եթէ մեռանիցի և ուստր ոչ գուցէ նրա, տացէ զժառանգութիւն իւր դստեր իւրում».

2. «Եւ եթէ ոչ գուցէ դուստր, տալիք զժառանգութիւն նորա հօրեղբօր իւրոյ».

3. «Եւ եթէ ոչ գուցեն նրա եղբայրք, տալիք զժառանգութիւն նորա հօրեղբօր իւրոյ».

4. «Եւ եթէ ոչ գուցեն եղբարք հօր նորա, տալիք զժառանգութիւնն ընտանեոյ մերձաւորի իւրոյ. ի ցեղէ նորա ժառանգեսցէ զնորայն»:

Ուրեմն մովսիսական օրէնքը, ինչպէս և Մխիթար Գօշի Դատաստանագիրքը, զանազանում է ժառանգների 4 կարգ: Առաջին կարգի ժառանգներին պատկանում են որդիքը, այսինքն նախ և առաջ տղայքը և միայն սրանց բացակայութեան դէպքում հանդէս են գալիս դուստրները: Երկրորդ կարգն են կազմում եղբայրները, բայց և ոչ քոյրերը. յաջորդութեան երրորդ կարգում են հօրեղբայրները, բայց ոչ հօրաքոյրերը և վերջապէս 4-րդ կարգին են պատկանում ֆնացեալ ազգականներն, այն էլ ըստ կարելոյն մերձաւոր աստիճանի:

(Կը շարունակւի)